


Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Երբ Աստուած
ստեղծեց ամեն ինչ



Written by: Edward Hughes

Illustrated by: Byron Unger; Lazarus

Adapted by: Bob Davies; Tammy S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation

has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2011 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,

as long as you do not sell it.




Ո՞վ մեզի ստեղծեց: Սուրբ Գիրքը,
Աստուծոյ Խօսքը, մեզի կը պատմէ
թէ ինչպէս մարդը ծնունդ առաւ:




Երկար ժամանակ առաջ, Աստուած
ստեղծեց Ադամը աշխարհի հողէն
ստեղծեց: Երբ Աստուած կեանք
փչեց Ադամի մէջ, ան
կենդանացաւ:




Նախքան որ Ադամը ստեղծե,
Աստուած աշխարհը ստեղծեց եւ
հրաշալի բաներով լեցուց զայն:




Քայլ առ քայլ Աստուած ստեղծեց
լեռները, դաշտերը, անուշաբոյր
ծաղիկները, երկար ծառերը, ...




... բիւրաւոր թռչունները եւ
տզտզացող մեղուները, հզօր կէտ
ձուկերը եւ կաչուն խիտունջները:



Իրականությունն մեջ Աստուած
ստեղծեց ամեն ինչ:



Սկիզբը, նախքան
որ Աստուած
ստեղծագործութեան
անցնի, բան
մը գոյութիւն
չունէր բացի
Աստուծմէ,
ոչ մարդիկ,
ոչ տեղեր եւ ոչ ալ
ուրիշ բաներ: Ոչինչ:



Ոչ լոյս, ոչ մութ:
Ոչ վեր, ոչ վար,
ոչ երեկ եւ ոչ ալ
վաղը: Միայն
Աստուած
կար,
որ սկիզբ
չունէր: Սակայն
յանկարծ Աստուած
գործի անցաւ:




Սկիզբը, Աստուած ստեղծեց
երկինքը եւ երկիրները:



Աշխարհը
պարապ էր
եւ ձեւ մը
չունէր:



ԵԼ ԱԹՈՒԹԻԼՆՂ
ԱՄԷՆ տեղ
ծածկած
Էր:




Յետոյ Աստուած

խօսեցաւ:

"Թող

որ լոյս

ըլլայ":



Եւ լոյսը եղաւ: Աստուած այս լոյսը
կոչեց ցերեկ եւ մութը կոչեց գիշեր:
Եւ առտուն եւ իրիկունը եղան
առաջին օրը:



Երկրորդ օրը, Աստուած ստեղծեց
ովկիանոսներուն ջուրերը, ծովերը
եւ լիճերը երկինքին տակ: Երրորդ
օրը, Աստուած ըսաւ,

"Թող որ ցամաքը դուրս
գայ": Եւ այդպէս եղաւ:



Նոյնպէս Աստուած հրամայեց
խոտին, ծաղիկներուն,
թուփերուն եւ
ծառերուն,



որպէսզի երեւին:







Եւ անոնք երեւցան: Եւ գիշերը
ու ցերեկը եղան
երրորդ օրը:



Ետքը Աստուած
ստեղծեց արեւը, յետոյ
լուսինը եւ զանազան
աստղեր, որ անթիւ եւ
անհամար են:



Եւ գիշերը ու
ցերեկը եղան
չորրորդ օրը:



Ծովու
կենդանիները
եւ ձուկերը ու
թռչունները
յաջորդէն
Աստուծոյ
ծրագրին մէջ:




Հինգերորդ օրը ԱՆ
ստեղծեց հսկայ
սղոցածուկ եւ
մանր ձուկեր,
երկար ոտքերով
թռչնազգիներ եւ
փոքր թռչուններ:




Աստուած ստեղծեց
ձուկերը, որ լեցնեն
որ վայելեն
երկինքը,
ծովերը եւ
ցամաքը:
Եւ գիշերը ու
ցերեկը եղան
հինգերորդ օրը:




Այդպէ ետք, Աստուած անգամ մը եւս
խօսեցաւ: Ան ըսաւ. "Թող որ հողը
առաջ բերէ ապրող էակներ...":
Ամէն տեսակի անասուն, միջատ
եւ սողուն գոյութեան եկան: Կային
հսկայ փիղեր եւ աշխուժ սկոյրներ:



Կապիկներ եւ կոկորդիլոսներ:
Որդիներ եւ դաշտամուկեր:
Ընծուղտներ եւ կատուներ:
Ամեն տեսակի անասուն այդ օրը
ստեղծուեցաւ Աստուծոյ հրամանով:




Եւ գիշերը ու ցերեկը եղան
վեցերորդ օրը:



Վեցերորդ օրը Աստուած շատ
հրաշալի բան մըն ալ ըրաւ: Յիմա
ամէն ինչ պատրաստ
էր մարդուն համար:
Լեցուն ուտելիք
կար եւ լեցուն
անասուններ,
որ զինք
ծառայէն:



Եւ Աստուած ըսաւ. "Թող որ մարդը
ստեղծուի մեր պատկերով, եւ
թող որ ըլլայ Տէր
աշխարհի վրայ":



Եւ այս ձեւով Աստուած ստեղծեց
մարդը Իր պատկերով: Աստուծոյ
պատկերով Ան
զինք ստեղծեց...



Աստուած
խօսեցաւ
Ադամի
հետ: "Կեր
ինչ որ կը
ցանկաս այս
պարտեզէն:



Սակայն
բարիի
եւ յարի
գիտութեան
ծառէն չուտես:
Եթէ ուտես այդ
ծառէն վատահ
որ պիտի
մեռնիս":



Եւ Տէր Աստուած ըսաւ. "Լաւ
չէ, որ մարդը առանձին
մնայ: Եւ անոր
օգնական մը
պիտի ստեղծեմ":



Աստուած Ադամի առջեւ բերաւ
ամէն գազաններն ու
թռչունները: Ադամ
ամէնուն անուն
մը տուաւ:




Ան շատ խելացի պետք է, որ ըլլայ
որ այդ գործը ամբողջացնէ:

Սակայն ամբողջ այդ
անասուններուն եւ
գազաններուն մէջ որեւէ
կողակից չկար
Ադամի:



Աստուած Ադամը խորունկ, շատ
խորունկ քունի մը անցուց:

Ան Ադամի կողէն
ոսկոր մը առաւ
եւ Աստուած
կինը ստեղծեց
Ադամի կողի
ոսկորէն:



Կինը, որ Աստուած
ստեղծեց Ադամի
լաւագոյն
կողակիցը
պիտի ըլլար:



Աստուած ամէն ինչ վեց
օրուայ մէջ ստեղծեց: Յետոյ
Աստուած օրհնեց եօթներորդ
օրը եւ հանգստեան
օր հռչակեց:



Եդեմի Պարտեզին մէջ,
Ադամ եւ Եւա, իր կիները
հրաշալի կեանք մը
կ'ապրէին Աստուծոյ
հնազանդելով:



Աստուած անոնց
Տէրն էր, իրենց
հայթայթողը եւ
իրենց ընկերը:



Երբ Աստուած ստեղծեց ամեն ինչ
Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ծննդոց 1 - 2

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:



Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը
ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը
հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի
համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի:
Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես
բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ,
յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի
համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն
օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

